ռանկք և ոչ տվին մի դրամ և ոչ արարին, այլ խաբանեցաւ այն։

Ապրիլի Է կիրակի Ծաղկազարդի ի Սուրբ Յարութիւն էաք։ Եւ այգուցն (8 Ապրիլ) գնացաք ի Սուրբ Յորդանան գետ և Դշի (9 Ապրիլ) առաւօտուն իջեալ ի ջուր՝ ուխտեցաք ի տեղին։ Ընդ մեր գայր փաշան Երուսաղէմի փողով և թմբկով, և առաջի մեր երթային հրամանաւ փաշայի բազում արապք ի սահմանացն, առ ի զգուշութիւն գողոց՝ ամենայն զինուք իւրեանց։ Եւ Դշի (10 Ապրիլ) Ը-րդ ժամու եկաք ի վանս մեր։ Եշի (11 Ապրիլ) մտաք ի Սուրբ Յարութիւն եւ Շաբաթի երեկոյի (13 Ապրիլ) կրկին մտաք նստելով յիւրաքանչիւր նախասահմանեալ տեղիսն. և աչք ամենեցուն ի կենսատու Գերեզմանն Քրիստոսի էր, ոմանց աչք յարտասուս, և ոմանք՝ ի հառաչանս, ոմանք բախէին զկուրծս և այլք լային զմեղս և խընդրէին զթողութիւն մեղաց իւրեանց։ Եւ Հոռոմք արաբացիք պար առեալ շուրջ զԳերեզմանաւն, մի ի վերայ միոյ հեծեալք՝ երգէին, գովասանէին զգովեալն և բարեբանեալն ի դասուց հրեշտակաց։ Եւ նախ եպիսկոպոսն Յունաց եկ ամենայն ուխտիւքն ի թափօր ի շրջապատ զուսպային Գերեզմանի, և գոռայր Գերեզմանն և յանկարծապէս ճառագայթեաց ի պատուհանիցն և եպիսկոպոսն հոռոմի և Խաչատուր վարդապետն մտեալ առին զլոյսն և ամենեքեան լուսաւորեալ. և ապա ուխտիւք ամենայն եկեղեցոյն՝ հայրապետք, եպիսկոպոսք, քահանայք, սարկաւագունք և կղերիկոսք՝ ժողովրդովք, վառեալ լապտերովք և զամբարուք որ ի լուսոյն, ելաք ի թափօր՝ շրջապատեալ զՍուրբ Գերեզմանն Քրիստոսի, և այնու զգեստովք և սպասիւք ելաք ի Վերնատունն և սուրբ պատարագ մատուցաւ և լուծաք զպահս։

Եւ առաւօտուն (14 Ապրիլ) նոյնպէս կատարեալ